ՎԱՐՁԱՏՐՈՒԱԾ ԻԶՄԻՐԵԱՆՑ ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ 1912ի ՄՐՑԱՆԱԿԻ

ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(1512-1933)

*Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները, եւն. եւն.*

ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

## ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Գ.

1.— ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ .. .. .. .. 2 *պատկերով*
2.— ՄԻՆԱՍ ՊԱՏՐ. ԵՒ ԿԱԹՈՂԻԿ. ԱԿՆԵՑԻ 6 »
3.— ՍԻՄԷՈՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ .. 3 »
4.— ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁՈՐԱԳԵՂՑԻ .. .. 7 »

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 20

Բ. ՀԱՏՈՐ

*Գինը* 2.50 Ե. Դ.

1933

ԳՐԱՏՈՒՆ
ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ
18, *Շարա Թէվֆիք*, 18 — *Գահիրէ*

*Տպագրութիւն Յակոբ Փափազեան*, 3, *Միտան Սուարէս* — *Գահիրէ*

# ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

## 1515–1629

Սարգիս Գ. Միւսայլ Կաթողիկոսի յաջորդեց Զաքարիա Բ. (1515) Վաղարշապատցի՝ իրեն աթոռակից ունենալով Սարգիս Վրաստանցի (1520-1536), որ 16 տարիներ կաթողիկոսութեան աթոռը նստաւ և վախճանեցաւ 1536ին: Իրեն յաջորդն էր Գրիգոր ԺԱ. Բիւզանդացի (1536), որ վախճանեցաւ 1545ին, իրեն յաջորդեց Ստեփաննոս Ե. Սալմաստեցի 1545, որ Պոլիս ուսած էր և բանիբուն ու գրասէր եկեղեցական մ'էր:

Ստեփաննոս լեզուագէտ և ուշագրաւ եկեղեցական մը, որ ուսած էր նաև Լեհաստանի մէջ, որով ջանաց ծաղկեցունել Ս. Էջմիածնի աթոռը, բայց դժբաղդաբար ժամանակի խռովութեանց պատճառաւ չկրցաւ ոչինչ ընել, թէև գրած է համառօտ մեկնութիւն Աւետարանին Յովհաննու, և պատմութիւն մը Քրիստոսի գործերուն վրայ, որ թարգմանած է պարսկական լեզուէն: Նաև գրած է ուրիշ գրքեր, որոնց հետքը չկայ սակայն: Վեց տարիներ Էջմիածին մնալէն ետք նեղուած Թուրքերէն իր տեղ ձեռնադրեց Միքայէլ Սեբաստացի Կաթողիկոսը և ինք հրաժարելով գնաց Պոլիս և հոն մեծ ընդունելութիւններու արժանացաւ: 1548ին Հռոմ գնաց և տեսակցեցաւ Պօղոս Գ. Պապին հետ, որ մեծ պատիւներով ընդունեց զինքը և անոր շնորհեց առանձին պալատ իր բնակութեան համար ուր մնաց մինչև 1550, յետ այնու ինք կը շրջագայէր ուխտատեղիներ: Գուլոտեր Աւիթինոս որ ականատես էր և մտերիմ, կը վկայէ թէ կաթողիկոսը բարեբարոյ և յոյժ քաղաքավար ու իմաստուն էր և որ խոստացաւ բարեօք յարաբերութիւն ունենալ լատին եկեղեցւոյն հետ: Անցաւ Գերմանիա այցելելու Կարոլոս Ե. Թագաւորին Սպանիոյ, որուն նուիրեց պարսկական բնագիրը՝ իր թարգմանած գրքին, ու պարզեց անոր իր ազգին թշուառ վիճակը ու օգնութիւն հայցեց:

Գերմանիայէն մեկնելով գնաց Լեհաստան և անտի Ռուսիա և ցամաքէն հասաւ Էջմիածին ուր ընդունուեցաւ մեծ պատիւներով թէ՛ Միքայէլ կաթողիկոսէն և թէ Միաբանութենէն և ժողովուրդէն: Միքայէլ կաթողիկոս ետ առաւ կաթողիկոսութեան աթոռը և յանձնեց Ստեփաննոսի, որ քանի մը տարիներ աթոռը նստելէն ետք 1561ին երբ վախճանեցաւ, Միքայէլ կաթողիկոս դարձեալ կաթողիկոսացաւ: Քանի մը տարիներ ետք Օսմանեան և Պարսկական կռիւները կը սկսին, աւերումներ և քանդումներ տեղի կ'ունենան: Մանաւանդ Պարսիկ կառավարութիւնը և խաները այնպիսի կեղեքումներ կը սարքէին որ կեանքը



18 Տաղարան Սիմէոն Կաթող.ի էջ 15



19 Տաղարան Սիմէոն Կաթող.ի էջ 16

ա՛լ անտանելի կը դառնար։ Այս վիճակին դարման մը տանելու համար Միքայէլ Ա. կաթողիկոս Սեբաստիա կը փախչի ուր խորհրդակցական գաղտնի ժողով մը կը գումարէ և կ'որոշեն ազնուական դասէն Աբգար դպիրը և իր Սուլթան Շահ որդին ղրկել Պապին, քաղաքական օժանդակութիւն ձեռք բերելու յոյսով։

Աբգարի և որդիին պատգամաւորութիւնը արդիւնք մը չունեցաւ, սակայն հոն Վենետիկի մէջ հրամանաւ Պապին և Դուքսին հայերէն գիրքեր կը տպէ և որու մասին երկարօրէն պիտի խօսինք։

Միքայէլ կը վախճանի 1570ին և իրեն կը յաջորդէ Գրիգոր ԺԲ. որ վախճանեցաւ 1598ին՝ Գրիգորի յաջորդեց Դաւիթ Դ. Տաթեւացի, որ վշտացած վանքին առնելիքտէրներէն և կառավարութեան տուած նեղութիւններուն չկարենալով տոկալ Մելքիսէթ եպիսկոպոսը կաթողիկոս օծեց, իբր օգնական. յետոյ կանչեցին Սրապիոն եպիսկոպոսն ևս և եպիսկոպոսներով ժողով գումարելով օծեցին կաթողիկոս Հայոց։ Դաւիթ մնաց Էջմիածին և երբ ժողովուրդը Պարսկաստան գաղթեց ինք ևս անոնց հետ Սպահան գնաց և ապա Նոր Ջուղայ։ Ժողովուրդին թախանձանքին վրայ նորէն Էջմիածին վերադարձաւ ու աթոռը պարապ գտաւ, որովհետև Մելքիսէթ լքած էր աթոռը։ 1616ին հրաժարեցաւ կաթողիկոսութենէ և դարձեալ Սպահան գնաց ուր վախճանեցաւ 1629ին։

Իր տառապանաց օրերուն Պապին նամակներ գրած է յայտնելով իր ժողովուրդին դառն կացութիւնը։

(13341-17)



# ՄԻՆԱՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԿՆԵՑԻ

## 1751 — 1753

Մինաս Ակնեցի նախապէս Մշոյ Առաջնորդ էր։ Ս. Կարապետի վանքը պարտքի տակ կը հեծէր, նոյն ժամանակ Մշոյ կառավարիչն էր Ալատին պէկ-փաշա։ Մինաս եպիսկոպոս անկարող ըլլալով վճարել Շոլորայ Սալիանի պարտքը, օր մը փաշային կողմէ Սալիան պահանջողներ կուգան ի Ս. Կարապետ վանք։ Մինաս եպիսկոպոս վանքէն կը փախչի մերձակայ Միրաշկուփ տեղը, որուն համար քիւրտերը կ'անուանեն մինչև ցարդ «չայէ բէշիշ» որ է «Տէրտէրի ձոր», իսկ հարկը պահանջողները կը դառնան և կը պատմեն փաշային Առաջնորդին փախուստը, այն ժամանակ փաշան լուր կը ղրկէ Մինաս եպիսկոպոսի և կը տանի Մուշ և զինք վարձատրելով ճիպպե (վերարկու) մը կը նուիրէ և վանքին պարտքն ալ կը շնորհէ։ Եւ երբ Մինաս եպիսկոպոս վանք կը դառնայ կը սկսի պարիսպները ծայրէ ծայր նորոգել, նոյնպէս նաև վերի պարիսպները և եկեղեցին,


ՏԵՏՐԱԿ
ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐԱՆԻ
...
Յամ Տն 1794 Մարտի 15
...
ՆԱԽԻՋԵՒԱՆ

20 Նոր Նախիջեւանի մէջ տպուած բառարան Ա. էջ


46

21 Նոյն բառարանէն էջ մը



22 Ձեռագիր նամակ Յովսէփ Կաթ. Արղութեանցի ուղղուած ի Պոլիս Թիֆլիզցի հանգուցեալ Տէր Յարութիւնի որդի Ստեփան հանճարամիս ՃՆՅ.ի Ա., էջ



23 Նոյն Բ. էջ



24 Նոյն Գ. էջ

որոնք նորոգութեան կարօտ էին։

Այս միջոցին Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի և կը մեկնի Պոլիս, իր տեղ տապջնորդ անուանելով իր ձեռնասուն Յովնան արեղան, Ներքին գաւառի Տանէ գիւղացին, Յոնան վարդապետ որ թէև բթամիտ էր, բայց ամէն օր աղօթելով Ս. Կարապետի գերեզմանէն կը խնդրէ խելք և ինքնաչխատութեամբ լաւ քարոզիչի համբաւ մը կը վայելէ։ Մինաս եպիսկոպոս (1749 - 1751) և որուն գործունէութեան մասին ոչ մէկ տեղեկութիւն ունինք։ «Ազգապատում» կը գրէ.— Մինաս 1749 դարունէն մինչև 1751 գարնան երկու տարի պատրիարքութիւն վարած է, ատանց չփոթի մը տեղի տալու, թէպէտ և առանց յատուկ և նշանաւոր արդիւնաւորութիւն մըն ալ ցուցնելու, որ եթէ մեծ գործունէութեան նշան չէ, խոհական և կանոնաւոր անձնաւորութեան նկարագիրը կը ցուցնէ։ Այդ համբաւը հարկաւ յորդորեց Էջմիածնի Միաբանները որ իրենց կաթողիկոս ընտրեն։





25 Երեւան 1668 ին
(Հայ Նաւապետներու քարտէսէն «Ցիշատակարան» թիւ 18 - 19)

Մինաս Պատրիարք համաձայնութեամբ Միաբանից Էջմիածնի և Կոստանդնուպոլսոյ ընտրեալ կաթողիկոս, Օսմ. կառավարութենէն ալ հրովարտակը ստանալով փութաց Էջմիածին երթալ և օծումը ստացաւ 1751 սեպտեմբեր 15 ին։

Իր գործունէութենէն ոչ մէկ յիշատակութիւն, որդէն ծեր էր և ընտրուելէն եր՛ ու տարի վերջ կը վախճանի 1753 մայիս 12 ին։

Երեւանցի Սիմօն կաթողիկոս իր Ջամբռ անուն գրքին մէջ կը գրէ. «ունի զգեստս դատաւորականս» հաւաքելով բացատրութեամբ և կը լրացնէ իր կենսագրութիւնը։

Գովելի է որ Էջմիածնի խառնվել վիճակը հանդարտեցուցած է և հակառակութեանց և թշնամութեանց վերջ տուած է։

Մարմինը թաղուած է Ս. Գայիանէի վկայարանին բակին ձախ կողմը։

# ՍԻՄԷՕՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ

## 1763 — 1780

Սիմէօն կաթողիկոս ծնած է Երեւանայ մէջ 1710 ին, կը կարծուի թէ Պռօշեան իշխանազուններէն սերած ըլլայ, իր ծնողքն են Կարապետ ու Գայիանէ։ Իր ուշիմութեամբ ու յաջողակութեամբ համբաւ հանած է Մայր Աթոռոյ դպրոցին մէջ, ուր իր ընթացքը աւարտելով անմիջապէս ուսուցչութեան կը կոչուի, հոն իրեն աշակերտ կ'ունենայ ապա երեւելի հանդիսացող միաբաններէն չատերը, որոնցմէ բոլորն ալ Սիմէօնի աշակերտած ըլլալնին պարծանքով յիշած են։

Սիմէօն տակաւին պատանի դպիր մը, Յարութիւն Ջուղայեցի եպիսկոպոսին մօտ՝ Պայազիտի նուիրակու-



22 Ձեռագիր նամակ Յովսէփ Կաթ. Արղութեանցի ուղղուած ի Պոլիս Թիֆլիզցի հանգուցեալ Տէր Յարութիւնի որդի Ստեփան հաննարամիs fննյ.ի Ա., էջ



23 Նոյն Բ. էջ



24 Նոյն Գ. էջ

որոնք նորոգութեան կարօտ էին:

Այս միջոցին Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի և կը մեկնի Պոլիս, իր տեղ առաջնորդ անուանելով իր ձեռնասուն Յովնան աբեղան, Ներքին գաւառի Տանէ գիւղացին, Յոնան վարդապետ որ թէև բթամիտ էր, բայց ամէն օր աղօթելով Ս. Կարապետի գերեզմանէն կը խնդրէ խելք և ինքնաչխատութեամբ լաւ քարոզիչի համբաւ մը կը վայելէ: Մինաս եպիսկոպոս (1749 - 1751) և որուն գործունէութեան մասին ոչ մէկ տեղեկութիւն ունինք: «Ազգապատում» կը գրէ.— Մինաս 1749 գարունէն մինչև 1751 գարնան երկու տարի պատրիարքութիւն վարած է, ասանց չփոթի մը տեղի տալու, թէպէտ և առանց յատուկ և նշանաւոր արդիւնաւորութիւն մըն ալ ցուցնելու, որ եթէ մեծ գործունէութեան նշան չէ, խոհական և կանոնաւոր անձնաւորութեան նկարագիրը կը ցուցնէ: Այդ համբաւը հարկաւ յորդորեց Էջմիածնի Միաբանները որ իրենց կաթողիկոս ընտրեն:





25 Երեւան 1668 ին

(Հայ Նաւապետներու քարտէսէն «Ցիշատակարան» թիւ 18 - 19)

Մինաս Պատրիարք համաձայնութեամբ Միաբանից Էջմիածնի և Կոստանդնուպոլսոյ ընտրեալ կաթողիկոս, Օսմ. կառավարութենէն ալ հրովարտակը ստանալով փութաց Էջմիածին երթալ և օծումը ստացաւ 1751 սեպտեմբեր 15 ին:

Իր գործունէութենէն ոչ մէկ յիշատակութիւն, որդէն ծեր էր և ընտրուելէն եր ու տարի վերջ կը վախճանի 1753 մայիս 12 ին:

Երեւանցի Սիմոն կաթողիկոս իր Ջամբռ անուն գրքին մէջ կը գրէ. «ունի զգրեանս դատաւորականս» հոգալեալ բացատրութեամբ և կը լրացնէ իր կենսագրութիւնը:

Գովելի է որ Էջմիածնի խառնակ վիճակը հանդարտեցուցած է և հակառակութեանց և թշնամութեանց վերջ տուած է:

Մարմինը թաղուած է Ս. Գայիանէի վկայարանին բակին ձախ կողմը:

# ՍԻՄԷՈՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ

## 1763 — 1780

Սիմէօն կաթողիկոս ծնած է Երեւանայ մէջ 1710 ին, կը կարծուի թէ Պաօչեան իշխանազուններէն սերած ըլլայ, իր ծնողքն են Կարապետ ու Գալյանէ: Իր ուշիմութեամբ ու յաջողակութեամբ համբաւ հանած է Մայր Աթոռոյ դպրոցին մէջ, ուր իր ընթացքը աւարտելով անմիջապէս ուսուցչութեան կը կոչուի, հոն իրեն աշակերտ կ'ունենայ ապա երեւելի հանդիսացող միաբաններէն շատերը, որոնցմէ բոլորն ալ Սիմէօնի աշակերտած ըլլալնին պարծանքով յիշած են:

Սիմէօն տակաւին պատանի դպիր մը, Յարութիւն Ջուղայեցի եպիսկոպոսին մօտ՝ Պայազիտի նուիրակու-



26 Երեւան 1843ին

(Վակնէրի «Ճանապարհորդութիւն ի Հայաստան» գրքէն, տպ. Վիեննա Մխիթար. Տպարան)

թեան օգնական նշանակուեցաւ և սարկաւագ եղած ատեն ալ Հնդկաստանի պատուիրակին օգնական, ուր մնաց երեք ու կէս տարի, ուրկէ ետք Էջմիածին վերադարձաւ ու անտի Պոլիս և ապա Կարին։ Պոլսոյ մէջ լաւ ընդունելութիւն գտաւ իր ուսումնական համբաւին համար։

Սիմէոն Պոլսոյ Գալաթ թաղին մէջ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ քարեայ խցում այսինքն կամարակապ սենեակին մէջ դասախօսութիւններ կ'ընէր հասակաւոր աշակերտներու։

Իրեն գլխաւոր պաշտպանն էր Եաղուպ ամիրա, որուն հետ Երուսաղէմ ուխտի գնաց 1751ին, և իր պերճախօս քարոզներով զարմացուց Նալեան պատրիարքը, որ նուիրեց իրեն փիլոն, մատանի և գաւազան։

Պզտիկ պատմուածք մը կը պատմուի, թէ՝ երբ ուխտաւորները կը դիմեն պատրիարքին որպէսզի յաղթանդամ Մովսէս վարդապետ իրենց քարոզելու արտօնէ, Նալեան՝ Սիմէոնը ցոյց տալով կ'ըսէ — Բարոզ կ'ուզես Բէօսէս, մօրուք կ'ուզես Մօսէս։

Սիմէոն Նալեանի և Եաղուպ ամիրայի հետ կը վերադառնայ Պոլիս 1752ին, բայց Նալեանի Պոլսոյ պատրիարքութեան վերահաստատուելուն և Եաղուպ ամիրայի գլխատուելուն վրայ Պոլիսը կը թողու և Էջմիածին կը հասնի ու Աղեքսանդր Բիւզանդացիէն եպիսկոպոսական աստիճանը ստանալէ յետոյ կը վերադառնայ Պոլիս՝ իբր նուիրակ։

Սիմէոն Մայր Աթոռի օգտակար հանդիսացած է ու Միաբանութիւնը շատ մը վարանումներէ ետք համարձակած է զինքը կաթողիկոսական աթոռը բարձրացնել։

1763ին Յակոբ կաթողիկոս Շա-

ՎԱՐՁԱՏՐՈՒԱԾ ԻԶՄԻՐԵԱՆՑ ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ 1912ի ՄՐՑԱՆԱԿԱԻ

ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(1512-1933)

Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները, եւն. եւն.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 11 - 20

Բ. ՀԱՏՈՐ

1933

ԳՐԱՏՈՒՆ
ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ
18, Շարա Թէվֆիք, 18 — Գահիրէ

Տպագրութիւն Յակոբ Փափազեան, 3, Միտան Սուարէս — Գահիրէ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Բ. ՀԱՏՈՐԻՆ


Թիւ 11 Հայրապետութիւն Հայոց Բ. . . . . . . . 7 պատկերներով
Ղուկաս Կաթողիկոս (1780-1798) . . .
Յովսէփ Դ. Կաթողիկոս (1800) . . . .

Թիւ 12 Հայ Երաժշտութիւն (Սայաթ Նովա) . . 6 պատկերներով

Թիւ 13-14 Հայ Գաղութը և Մամուլը Եւրոպայի մէջ 17 պատկերներով
Եւրոպա հրատարակ. լրագիրներուն ցուցակը
Ստեփան Ոսկան . . . . . . . . . . .
Գաբրիէլ Եպիսկ. Այվազովսկի . . . . .
Կարապետ Վրդպ. Շահնազարեանց . . .
Յովհաննէս Ալթըն . . . . . . . . . .

Թիւ 15-16 Նշանաւոր Ազգայինք Գ. . . . . . 21 պատկերներով
Միքայէլ Չէլէպի Տիւզ . . . . . . . .
Գէդէոն և Յովսէփ Աղաթոն . . . . . .
Գրիգոր Աղաթոն . . . . . . . . . .

Թիւ 17 Նշանաւոր Ազգայինք Դ. . . . . . . . 4 պատկերներով
Մկրտիչ Ամիրա Ճէզայիրլեան . . . . .
Ֆիլիքս Պօղոս Պատուէլլի . . . . . . .

Թիւ 18-19 Նշանաւոր Ազգայինք Ե. . . . . . 11 պատկերներով
Յովսէփ Չէլէպի Տիւզ . . . . . . . .
Բժիշկ Պօղոս Ա. Շաշեան . . , . . . .
Հին Ջուղայեցի Հօճա Մարտիրոս . . . .
Պարոն Կիւլպէկեան Մարգարեան . . . .
Մարգար Ամիրա և իր որդին Մարտիրոս
Յովհաննէս Տրենց Մարգարեան . . . .
Գրիգոր Տրենց Մարգարեան . . . . . .

Թիւ 20 Հայրապետութիւն Հայոց Գ. (1515-1629) 18 պատկերներով
Մինաս Պատր. և Կաթողիկ. (1751-1753)
Սիմէոն Ա. Կաթողիկոս (1763-1780) . .
Եփրեմ Կաթող. Ձորագեղցի (1809-1830)

Թիւ 11-20 Բ. Հատոր Ընդհանուրը 84 պատկերներով


# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## ՔՍԱՆԸՀԻՆԳ ՏԱՐԻ ԵՏՔ

«Յիշատակարան»ի Ա. հատորին յառաջաբանը հրատարակեցինք այն ինչ որ մեր առաջին տպագրութեան մէջ գրած էինք քանը հինգ տարի առաջ:

Սահմանադրութեան վաղորդայնին էր որ սկսանք հրատարակել ծրագրելով հոխ հատոր մը և եթէ ընդհանուր պատերազմը չը ծագէր, արդէն իսկ մեր ծրագիրը լրացուցած պիտի ըլլայինք, սակայն «Զարչարուած Յիշատակարան»ը պիտի ունենար նաև իր անակնկալները: 1912-1913ին Հայ գիրերու և Հայ տպագրութեան կրկին յոբելեանները տօնուեցան աշխարհի ամէն կողմ, ու այդ միջոցներուն ես ալ գտնուելով Եգիպտոս, թէ հոս Գահիրէի մէջ և թէ Աղեքսանդրիա, մոգական լապտերի ապակիներու վերածելով, իմ ունեցած թանկագին լուսանկարներս և վաւերաթուղթերս, հանդէսներ սարքեցի որոնք մեծ ընդունելութեան արժանացան և գնահատուեցան թէ՛ հայերէ, թէ օտարազգիներէ և թէ մամուլէն:

Սոյն գործին բազմածախս հանգամանքը նկատի ունենալով Հ. Բ. Ը. Միութեան առաջարկով Ամերիկա եւս գացի, հոն ալ 14 քաղաքներու մէջ կրկնեցի սոյն ներկայացումները, ու եթէ նիւթապէս չունեցայ ակնկալուած արդիւնքը, սակայն բարոյական գոհացում մը ունեցայ:

Եւ այս ամէնը ըրի ապահովելու համար, սոյն բազմածախս հրատարակութեան ծախսերը:

Ընդհանուր պատերազմէն առաջ Պոլիս երթալու դժբաղդութիւնը ունեցայ, ու ահա պատերազմը ծագելով մնացի հոն, ու հետզհետէ աքսոր, զինուորութիւն, դատարան, վճիռ և այլն ամէնքն ալ իրար յաջորդեցին, մինչև պատերազմի աւարտումը, անկէ վերջ Եգիպտոսի հիւրասէր երկրին դիմելով, 11 տարիներէ ի վեր, Եգիպտոսի ժողովուրդին և իր լուսամիտ թագաւորին վեհ. Ֆուատ Ա.ի շնորհները կը վայելենք բոլոր հայերս:

Երբեք մտքէս չէի անցուներ թէ պիտի կարենամ նորէն հրատարակել «Յիշատակարան»ը, քանի որ աւելի լայն տարիներու մէջ 1923-1930, երբեք չը խորհեցայ այդ մասին, սակայն վաղեմի բարեկամս և «Արև» օրաթերթի այժմու խմբագրապետը Պ. Յովհաննէս Փօղոսեան, երբ ոտք դրաւ Եգիպտոսի հողին վրայ գաղափարը ունեցաւ տօնելու «Արև» թերթի 25 ամեակը ու իր 4000 թուեակը, և առ այդ ինձ ալ թելադրեց որպէսզի յօդուածով մը Եգիպտահայ Լրագրութեան պատմութիւնը պատրաստեմ, ինչ որ ըրի հաճեպ տողերու մէջ:

«Արև»ի նոյն օրուան բացառիկ թիւը որ մեծաքանակ սպառում ունեցաւ, ինձ թելադրեց որ «պրօշիւր»ով մը ամփոփեմ սոյն յօդուածը. ու նոյն ատեն Յ. Փօղոսեան ինձ խորհուրդ կուտար վերստին սկսիլ «Յիշատակարան»ի հրատարակութեան և այս անգամ չմեռած աւարտել սոյն գործը, միւս կողմէ ալ վաղեմի բարեկամս Հ. Սիմոն Երեմեան եւս քանիցս ինձ թելադրած էր հրատարակել «Յիշատակարան»ը: Այս երկու քաջալերանքներն, ու մանաւանդ Ս. Պապի քաջալերականէն որ 1923ին ստացած եմ իր ներկայացուցիչ Հ. Թեսարանէն (Մատենադարանապետ Վատիկանի):

Ս. Պապը նախապէս Միլանի Մատենադարանապետ Հ. Ռաթթի, Աբգար դպրի կենսագրութեան առթիւ մեծ աջակցութիւն ունեցաւ ինձ, յետոյ երբ Պապական աթոռը բազմեցաւ, իրեն ղրկելով հաւաքածոյէս, իրմէն գնահատական և օրհնութիւններ ըստացանք ես և եղբայրս՝ նամակով մը որուն նմանահանութիւնը պիտի հրատարակեմ Աբգար դպրի կենսագրութեան մէջ Ն. Սրբութեան լուսանկարով միասին:

Ամենէն մեծ դժուարութիւնս նիւթական մասն է, և այս հրատարակութիւնն ինձ առայժմ շահ մը չարտադրեր և եթէ Երուանդ Պէյ Աղաթոնի և Տիար Գալուստ Կիւլպէնկեանի նիւթական նուէրները չըլլային բաւական պիտի նեղուէի: Միւս կողմէ մեր բոլոր բաժանորդներն ալ որոնք քաջալերեցին մեզ արժանի են մեր շնորհակալութեան: Վստահ ենք թէ անոնք մինչև վերջ մեզ հետ պիտի ըլլան, մանաւանդ անոնցմէ հետևեալներն որոնք քանի մը օրինակներ բաժանորդագրուելով նուիրեցին զանազան

հաստատութեանց.— Հ. Բ. Ը. Միութիւնը, Ռ. Ա. Կ. Գահիրէի Ակումբը, Մէթր Միհրան Թէլեան, Մէթր Շաւարշ Սեւյօնքեան, Տ. Մեսրոպ Գույումճեան եւ այլն :

Ալ չպիտի ուզեմ խօսիլ իմ գործի մասին, պիտի սպասեմ որ ուարտի ան, թողլով ընթերցողին դատողութեանը, միայն նուիրական պարտք մը ունիմ յայտնել իմ շնորհակալիքս բոլոր անոնց որոնք գնահատեցին գործս, ու որչափ ատեն որ կեանք ունեցայ պիտի ջանամ աւարտել այս գործը որ նախասահմանուած է Հայկական Բանթէոն մը ըլլալ, եւ որ վարձատրուեցաւ 1912ին Իզմիրեանց բարեյիշատակ Յովսէփի մրցանակաւ (ըստ տեղեկագրի հանգուցեալ ուսուցիչ Միհրան Յովհաննէսեանի) :

Վերջացնելէ առաջ շնորհակալութեան պարտք մ՛ալ ունիմ յայտնել «Արեւ»ի Պատ. խմբագրութեան, որ ամէն ատեն նպաստաւոր կերպիւ վերաբերուեցաւ «Յիշատակարան»ի հանդէպ : Նոյնպէս գլիշէի գործարանատէր Պ. Գ. Գալֆայի որ գեղեցիկ գլիշէներով օժտեց մեր «Յիշատակարան»ը : Նաեւ՝ մեր տպագրիչին Պ. Յակոբ Փափազեանի՝ որ գեղարուեստական տպագրութեամբ եւ կուրծք տալով դժուարութեանց եւ մեզի ընծայած ամէն կարգի դիւրութիւններով, կրցանք աւարտել նաեւ Բ. հատորը :

1933 ՎԱՀԱՆ Գ. ՁԱՐԴԱՐԵԱՆ

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

«Յիշատակարան»ի պատրաստողը առաջի օրէն զգացած է գործին ծանրութիւնը եւ լուրջ երկասիրութիւն մը արտադրելու ամէն միջոցները կանխաւ ապահովեր է :

«Յիշատակարան»ի կարեւորութեան գաղտնիքը զայն հրատարակողին անձնական զոհաբերութեան մէջն է, քանի որ գրավաճառի մը համար հեշտ եւ շահաւէտ պիտի ըլլար բազմածախս «Յիշատակարան»ի տեղ հրատարակել ո՛ եւ է գպրոցական դասագիրք եւ հակակշիռէ խոյս տուած կոտր-փրթուճ գիրքերու տեղ զանոնք քշել:

Բայց իր շահախնդրութենէն աւելի՝ սքանչացումն կ՚ազդէ իր յամառ յարատեւութիւնը, որով ամէն զոհողութեան ի գին ձեռք կը բերէ ընտանեկան յարկին տակ մնալու սահմանուած լուսանկարներ, կոթողներ, հազուագիւտ կոնդակներ, թանկագին վաւերաթղթեր եւ այլն :

Ուրեմն թէ՛ օգտակարութեան, թէ հարազատութեան եւ թէ այլ բազմազիմի նկատումներով «Յիշատակարան»ն է արդարեւ «կարեւոր» երկասիրութիւն մը :

(Տեղեկագրէն մաս մը)
Միհրան Յովհաննէսեանի
Քննիչ Իզմիրեանց Յանձնաժողովի

***

«Յիշատակարան»ը՝ ստուգիւ սքանչելի գործ մըն է ուր նկարուած կը գտնենք հայ կեանքը իր իսկական գոյներով, շարան շարան մեր առջեւ ներկայացնելով երեւելի անձանց շարժապատկերը որ մէյմէկ մնայուն վաւերաթուղթ պիտի ըլլայ ապագային համար : Այսպիսի կարեւոր եւ տաժանելի գործ մը ի գլուխ հանելու համար՝ եռանդուն եւ անխոնջ աշխատողի մը անվհատ ջանքերուն կը կարօտէր եւ իրաւամբ կարելի է ըսել «Արժանի է մշակ վարձու իւրոյ» :

Հ. Յ. ՏԷՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ
«Հանդէս Ամսօրեայ» 1912

***

«Յիշատակարան»ը գրուած է պարզ եւ յստակ աշխարհաբարով մը : Պատկերները բաւական յաջող են : Կենսագրականները՝ հեռի ուսումնասիրութիւններ ըլլալէ, կուռ ու ցամաք խոտյումներն են ներկայացուած դէմքերու կեանքին ու գործերուն : Իւրաքանչիւր կենսագրութեան տակ նշանակուած են աղբիւրները : Ստուգիւ այս գործը աւելի բանասիրական արժէք ունի քան թէ գրական :

«Հայրենիք» 1910 Յ. ԳԱՉԱՆՃԵԱՆ
Պոլիս

***

Ջղուտ գրագէտի նիհար կազմութիւնը կը մատնէ որ ան գրքերու մէջ կը հիւծի, վանականի մը համբերութեամբ կը պատրաստէ «Յիշատակարան»ը : Մեծ խանդավառութեամբ ընդունելութիւն գտնելու արժանի է այդ : 1512–1913 մեր մտաւորական կեանքի յիշատակարանն է այն, խըստապահանջ բանասէրի մը քննադատական հոգւով գրուած չէ այն, այլ կը կրէ այն ոճը, ինչ որ կը պահանջուի կենսագրական բառարանէ մը :

«Կ. Պոլիս» 1913 Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ
Տպ. Վենետիկ





27 Երեւան Ներկայիս

մախեցիի վախճանումէն ետք Էջմիածնի միաբանները հինգ անգամ ժողով գումարեցին, ընտրելու համար նոր կաթողիկոսը, ի վերջոյ կ՚որոշեն Սիմէօն եպիսկոպոսը, որուն ընտրութեան հաճութիւն յայտնած էր նաեւ Նալեան Յակոբ Պատրիարք:

Սիմէօն կաթողիկոս սկսաւ կարեւոր նորոգութիւններ ընել վանքին մէջ, դպրոց, միաբաններու սենեակներ, սեղանատուն, անտառներ, եւլն. եւ ամրաշէն պարիսպներով պատեց չորս կողմը:

Տպարան մը բացաւ օժանդակութեամբ Հնդկաստան բնակող Ջաքիկեանց Խոջաջանեան Գրիգորի, Ս. Աթոռի պարիսպէն դուրս մեծագումար ծախսով հաստատեց թղթի գործարան մը եւ ծաղկեցուց թղթագործութիւնը, բերել տալով հեռաւոր տեղերէ գործիքներ եւ վարպետներ թղթոշինութեան:

Ուսման նախանձախնդիր էր եւ գրեց շատ մը գրքեր որոնցմէ ոմանք տպուած են, բայց իրեն ոճը անյարդար էր: Սիմէօն Կաթողիկոս մեր Տօնացոյցը կարգաւորեց, երկու մասի բաժնելով (1777 Յունուար 2):

Մոսկուայի երեւելի Մետրապոլիտ Պղատոնի նամակ գրած եւ անկէ պատասխան ստացած էր:

Ռուսաց Կատարինէ Բ. կայսրուհին հրովարտակ ղրկեց կաթողիկոսին, որուն մէջ կը խոստանար Աթոռը եւ Հայոց ազգը իր կայսերական ողորմութեան հովանաւորութեան տակ առնել: Այս հրովարտակը կը յիշատակուի նաեւ Աղեքսանդր Ջարի տուած հրովարտակին մէջ:

Էջմիածին թէեւ Պարսից իշխա-



30 Մեծ եւ փոքր Մասիս 1843 Վակնէրէ



31 Պայազիտ 1843ին Վակնէրէ





32 Եփրեմ Կաթողիկոս



34 Ձեռագիր Նամակ
Եփրեմ Կաթողիկոսի Ա. էջ



35 Նոյն Բ. էջ

Թէև Եփրեմ կրնար աւելի հանգիստ վայելել իր կաթողիկոսութիւնը, քանի որ մինչև 182 նշանաւոր պատերազմներ չեղան, բայց իր տատամսոտութեամբ և անհաշիւ անտեսութեամբ խառնակութեանց ժամանակ վանքի պարպուած գանձարանը պարտքի ենթարկեց և պարտատէրները հանգամանկութեամբ գոհացնելու նպատակաւ 1821ին հեռացաւ Էջմիածինէն և այցելելով Հին Նախիջևան և Շուշի քաղաքները Հաղբատու վանքը բնակեցաւ։

Եփրեմ որ իր ընտրութեան երրորդ տարին իսկ հրաժարական տուած է. 1822 նոյեմբեր 8ին Էջմիածնի Սինոդի անունով տուաւ իր վերջին հրաժարականը, պատճառաբանելով իր անկարողութիւնը կառավարելու Հայրապետական իշխանութիւնը և իր ծերութիւնը։ Սինոդը Հայրապետի հրաժարականը ներկայացուց Նիկողոս կայսեր և Կովկասի կառավարիչին

Յիշատակարան մեր երկասիրութիւնը որ հրատարակուած է 1909-1914 շրջանին և որ պսակուած է Սահակ Մեսրոպեան 1912 տարւոյն մրցանակաւ, ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի, բոլորովին սպառած է։ Ամէն կողմէ մեզի եղած խնդրանքներուն գոհացում տալու համար հետզհետէ կը հրատարակենք Հայ երեւելիներու կենսագրականները, լուսանկարները, գրութիւնները և նմանահանութիւնները իրենց գործերուն հետ, անոնք որոնք հրատարակած ենք և անոնք որ չեն հրատարակուած այն ատեն։ Նկատելով գործին բազմածախս հանգամանքը, Յիշատակարան Մատենաշար անունով պրակներ կը հրատարակենք, սպասելով հասարակութեան քաջալերանքին։

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՆԵՐԸ ԼՐԱՑԱԾ ԵՆ։

## ՄԵՐ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

*ԵՐՈՒՍԱՂԷՄ*

Ամենապատիւ Թորգոմ Արքեպիս. Ս. Պատրիարք Հայր Ս. Երուսաղեմայ Ա. Բ.

Տեարք Յակոբջան Եաղուպեան Ա.

Աշոտ Նշանեան Ա. Բ.

*ՓԱՐԻԶ*

Տիար Միսաք Նուպարեան Բ.

Հ. Սամուէլ Գրատուն 10 օր. Ա. Բ.

*ԳԱՀԻՐԷ*

Տօքթ. Պ. Սերոբեան Ա. Բ.

Տեարք Կարապետ Թրեանց Բ.

Յովհաննէս Սէքսէնեան Բ.

Տիգրան Հանընլեան Բ.

*ԳԱՀԻՐԷ*

Տօքթ. Հայկակ Ռաֆայէլեան Ա.

Տեարք Թագւոր Պետրոսեան Բ.

Աբրահամ Խաշմանեան Բ.

Յովհ. Տէր Մկրտիչեան Բ.

Գէորգ Տէր Ստեփանեան Բ.

*ՄԻԼԼԱՎԻ*

Տիար Յակոբ Աբելեան Բ.

*ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ*

Գրասէր մը 2 օր. Բ.

*Բացուած է «Յիշատակարան Մատենաշար»ի Գ. Հատորի բաժանորդագրութիւնը 10 պրակի բաժնեգինն է 25 Ե. Դ. պրակը 2 1/2 և Արտասահման 30 ֆր., Ամերիկա 1.50 տոլար։ Ա. և Բ. Հատորները կը վաճառուին 60 Ե. Դ.*
*Հասցէ՝ VAHAN ZARTARIAN, 18, Rue Tewfik — LE CAIRE Egypte)*

Cliché «KALFA»
Imprimerie AGOP PAPAZIAN - 3, Midan Suarès, Le Caire (Egypte)